ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀՕԿ Ի ՀԱՐԱՒ - ԱՄՐԿ. ՇՐՋԱՆ

24255

ԱՇԽԱՏԱՒՈՐԱԿԱՆ

ԵՐԳԱՐԱՆ

Պուէնոս Այրէս

1932

891.99-192
Ա-65

ԳԻՆ 25 ՍԷՆԹ

О
Ш. В.

№ 2003

Спец. отдел
Гос. публичная Б-ка

654

891.99-192
Ա-65

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԻԱՍՆԻԿԵԱՆ

Խորհրդ. Հայաստանի առաջին Նախագահ և ՀՕԿ-ի հիմնադիրը։

92661-ԱՀ
636-2002

ՀՕԿԻ ԵՐԳԸ

ԳՐԵՑ՝ Դ. ԴԵՄԻՐՋԵԱՆ

Հա՛ կառուցեց նոր հայրենիք
Խորհուրդների Հայաստան
Մեզ բանուորներ եւ գիւղացիք
Հիմա տէրն են այս նոր տան։
Զեզ ուրախ լուր,
Մեզ ուրախ լուր,
Կոչ է կոչում ՀՕԿ-ն ամենուր։

Հիմա միայն խինդ է ու տօն,
Հիմա պայքար, ջանք ու գործ,
Դէ՛ բեր ու գա՛ բակ երկար, բեռոն,
Վեր բարձրացաւ շէնքը նոր։
Զեզ ուրախ լուր,
Մեզ ուրախ լուր,
Կոչ է կոչում ՀՕԿ-ն ամենուր։

ՍԱՀԱԿ ՏԻՐ ԴՈՒՐԻԼՅԱՆ
ժողովրդ. դեմոկրատների խորհուրդի ճախագահ

ԴՈՒ ՁՈՀ ԳՆԱՑԻՐ

Դու զոհ գընացիր կատաղի պայքարում
Ընդդէմ բրռնակալ արիւնոտ աշխարհի.
Եղար անընկնուն դու ցարի բանտերում
Տարար բրռնութիւն ու տանջանք աքսորում։
Մարուկ կարգերին պատերազմ յայտնեցիր
Բանւոր – գիւղացու մեծ խորհուրդը տուիր
Արծի՛ւ կուսմունար,
Դո՛ւ Վլադիմիր Իլյիչ,
Ընկեր ղեկավար,
Դու մեր մեծ ուսուցիչ։

Հիւսիս և հարաւ, արեւելք, արեւմուտք,
Տեսար բարձունքներն ազատ մարդկութեան.
Ճընշված ազգերին դու տուիր մի նոր կեանք
Բացիր ճանապարհը հզոր Միութեան։
Եւ մենք կընթանանք քո գրծած ուղիով
Անւախ. աներկիւղ, համարձակ, անսասան
Մեռար դու, բայց քո
Գաղափարը անմահ
Ապրում է մեր մէջ
Եւ կապրի յաւիտեան։

ԱՐՄԷՆ ԱՆԱՆԵԱՆ

Նախագահ Խ. Հայաստանի
եւ Անդրկովկասեան Հան
բապետութեան Գործա
դիր Կոմիտէներու

ՄԱՐՇ ՀՆԳԱՄԵԱԿԻ

ԳՐԵՑ՝ ՂԼՂԶԱՆ

Յառաջ, յառաջ, յառաջ, յաղթող բանակ, յառաջ։
Յախուռն անկանգ յառաջ, յառաջ,
Ելնենք գրոհի, յառաջ.
Մարտի ելնենք, գրոհի ելնենք,
Շտապ ելնենք, ելնենք։
Յառաջ, յառաջ, յառաջ. ետեւ նետենք դարը
Նոր դար կերտենք ի, նոր կեանք։
Յառաջ, յառա՛ջ, դունդ առ դունդ,
Գնանք մարտի երկաթակուռ
Շտապ յառա՛ջ, յառա՛ջ։

ԱՆԳՈՐԾՆԵՐՈՒԵՐԳԸ

1

Քաղցածների յամբ բանակներ
Էլ այսուհետ չեն համբերեր
Ընդոսդ լողոք կը բարձացնեն (կրն)
Բռնաւորներ կը սարսափին։

2

Ձիւն ձմեռ կերթա գարուն կուգա
Կարմիր այգը կը շողշողա
Վերջ կը գտնէ վախն ու հոգսը (կրկն)
Էլ չի տիրեր փողն ու ստամոքսը։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՐԳԸ

Մշակ, բանուոր ըէնչպէր ախպերք
Արի՛ք միանանք յառաջ գնանք...
Ազատանքի խիզախ պաշտպան
Կոմինտերնի թեւ թիկունքը տանք
Ո՜խ, մենք տանչեինք քրտինք թափենք
Արիւն վաստակ դատեենք դիղենք,
Շ ուշագործող ցիցեր վատնեն,
Իսկ մեզ՝ չոր հաց բաժին հանեն։
Դե՛հ սեւ օրեր, բոլոք դարձէ՛ք,
Արիւն, քրտինք երկունք մտէ՛ք,
Տանջանք, զրկանք լեզու առէք,
Սոցիալիզմի ճամբան բացէք։

ԵՐԳ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ

ԳՐԵՑ՝ Վ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

1

Մենք դուրս եկանք մեր շարքերով բազմահազար,
Ողողեցինք հեղեղի պէս քաղաքը մեծ
Մեր սրտերում հրդեհի պէս պայքար եռաց
Հոկտեմբերն էր, Հոկտեմբերն էր, որ բռնկուեց։

2

Յորձանք ուժինք ու բարձրացանք ծովի նման,
Հողմերի պէս մենք միշտ հզօր ու վիթխարի,
Այնքան դաւեր ու կռիւներ եկան անցան,
Ո՞վ կարող է մեր բանակը յաղթահարի։

3

Որքան կուզեն սեւ բանակներ թող նորից գան,
Ինչքան կուզեն թող որ մեր դէմ լարեն դաւեր
Մենք պատրաստ ենք, ինչքան էլ որ մեզ սպառնան
Մենք պատրաստ ենք, մենք հզօր ենք, մենք անեղեր

4

Մենք ենք, մենք ենք, ապագայի անպարտ բանակ,
Մենք ենք, մենք ենք, որ ամենից հզօր ելանք
Վաղը նորից կռիւ ու մահ պիտի լինի։
Մենք ենք, մենք ենք վերջին անգամ, որ պիտի գանք

ՀՐԱԺԱՐԻՄՔ ԸՆԿԵՐՆԵՐ

1

Հրաժարիմք ընկերներ հին օրէնքներից
Թափ տանք դրանց փոշիներ ոտներից
Մենք կերթանք հալածւած ընկերների հետ
Մենք կելթանք մերկ սոված բանւորների հետ
Դաւադիր թշնամուն մենք միշտ կանարգենք
Եւ կուելու նրանց կը կանչենք։
Դէ եկ բոլոքիր խեղճ բանւոր դասակարգ
Ելլենք կուելու կարմիր դրօշակին տակ
Թող գրոհ տայ բանւորն անվախ քաջ
Յառաջ յառաջ յառաջ յառաջ։

2

Տըզրուկներ աղաներ ճարպոտ փորերնին
Լեցնում են քո դառն աշխատանքով
Քրտինքնդ շահում են քո թշնամիներ
վերջին պատառ հացդ խլելով
Դէ՛ քաղցիր որ նոքա կերու խում անեն
Դէ՛ քաղցիր որ նոքա կեղտոտ խաղերով
Խեղճ ազատութիւնդ ի սպառ կորցնեն։
Դէ եկ բոլոքիր խեղճ բանւոր դասակարգ
Ելլենք կուելու կարմիր դրօշակին տակ
Թող գրոհ տայ բանւորն անվախ քաջ
Յառաջ յառաջ բանւորն յառաջ։

ԻՆԴԵՐՆԱՑԻՕՆԱԼ

Թարգմ. Ե. ՉԱՐԵՆՑ

Ելիր ում կեանքը անիծել է,
Ով ճորտ է, մերկ է և ստրուկ։
Արդէն վառվում են մեր սրտերը,
Արդէն կուի ենք մենք ձգտում։
Այս հին աշխարհը կը փորենք մենք
Մինչև հիմքերը—և յետո
Մեր նոր աշխարհը կը շինենք մենք
Ուր ո՛չ ըստրուկ կա, ո՛չ դըժգոհ։
Սա է վերջին կռիւը
Եւ պայքարը մեր մեծ-
Ինդերնացիօնալը
Աշխարհը կը փրկէ։
Ոչ ոք չի տա մեր փրկութիւնը,
Ո՛չ խեղթ հերոսը ո՛չ արքան,
Մենք պէտք է մեր ազատութիւնը
Կը ունենք ձեռքով մեր սեփական։
Որպէսզի շուտ փըշրենք մեր լուծը
Եւ ետ խլենք ողջ հողը մեր-
Խըփենք մուրճերը, տանք մեր ուժը,
Քանի երկաթը տաք է դեռ։
Սա է վերջին կրռիւը
Եւ պայքարը մեր մեծ-
Ինդերնացիօնալը
Աշխարհը կը փրկէ։
Լոկ մե՛նք, ճորտեր ու բանւորնե՛ր

Ունենք անխախտ մի իրաւունք՝
Ասել, որ հողը մե՞րն է, մերն է
Կորչի՛ հարուստը թող տգրուկ։
Եւ երբ պայթի մեծ փոթորիկը,
Եւ կուշտ շները չքանան,
Նորից երկիրը և երկինքը
Մերն է ու մերը կը մնան։
Սա է վերջին կռիւը
Եւ պայքարը մեծ-
Ինդերնացիոնալը
Աշխարհը կը փրկէ։



ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

ՃԱՉՈՒՄ ԵՆ

Ճաչում են ոխերիմ հովերն մեր անհրնդաս
Սեւ մութ ուժերի կատաղի ճնշմամբ
Նրանց դէմ լարում են օրհասական մահ
Ինչպէս մի վիճակ է մեզ սպասում
Բայց, մենք կը պարկենք անվախ ու հպարտ
Կարմիր դրօշակը բանուորի ազատ,
Դրօշակը մեծ գործ է ժողովուրդական
Յանուն նոր կեանքի արդար ազատութեան։

Դէպի՛ մարտ արեան արդար սրբազան (կրկ)
Քայլեցէ՛ք յառաջ բանուորներ քաջ։

Մեռնում է մեր օրից բանուորը սովից
Եղբայրներ միթէ է՞լ համբերենք
Մեր կը տրիճ ընկերներ կախաղաններից
Հերոսի մահով չեն սարսեր երբեք
Վեհ-գաղափարի համար ընկճելով
Ձեն կորչիր անհետք պատւի զոհերը
Նրանց անուներ յաղթական երգերով
Պիտի յիշին, յետնորդ մեր սերունդները։

Դէպի՛ մարտ արեան արդար սրբազան (կրկ)
Քայլեցէ՛ք յառաջ բանուորներ քաջ։

ՋԱՆ ԲԱՄՊԱԿ

Գրեց՝ Ա. ՇԱՅԲՈՆ

Բացւել ես Ջան, հեյ բամպակ,
Լցւել ես, Ջան, մեր բամպակ,
Ջանաք անենք փաթիլըդ,
Բարդան անենք քեզ, բամպակ։
Ադի նազուք, Ջան բամպակ.
Մալանչ անեմ, իմ բամպակ։

Թելեր, թելեր անելով
Քեզ փայփայեմ, իմ բամպակ.
Սպիտակ չիթ ու կտաւ
Քեզնից գործեմ, հե՜յ բամպակ։
Գուլներ անեմ, որ խնդա
Սիրուն դէմքդ, մեր բամպակ։

ՄԻԱՆԱՆՔ ԲԱՆԻՈՐՆԵՐ

Միանանք բանւորներ այլ ազգաց բոլոր երկրում,
Յանուն գաղափարի տանջւած խեղճ աղքատներ,
Գրոհ տա՛նք խորտակենք բեռդը ցիցերին,
Մինչեւ երբ մենք ուտենք փշրանք հացերի,
Հացը մենք արտադրենք արիւն քրտինքով (կրկ)
Նրանք կուշտ՝ իսկ մենք միշտ քաղցած օրերով։

Միանանք հողազուրկ բոլոր մշակ բենչպերներ,
Բոլորիս արիւնը շահագործւած աղբարներ,
Կոխկռտենք օրէնքը հողատերերին
Եւ խլենք մեր հացը ձեռքը վատերից
Հողը մեզ, ջուրը մեզ, աշխատանքը մեզ (կրկ)
Մենք ցանենք մենք քաղենք արդիւնքը չէ մեզ

Բա՛ւ է, բաւ՛ ընկերներ կոտրե՛նք լու՛ ը այս չարին
Կապիտալիստներին, առանձնաշնորհեալներին,
Վար առնենք դիմակը վատ կղերներին
Որ չանեն մեզ սարուկ չար ատուածներին.
Այս է սուրբ իդէալը վեհ կոմունիզմին՝)կրկ)
Այս երկրի վրա հիմնել դրախտը երկնային։

ՕՐԵՐԻ ԵՐԳԸ

Գրեց՝ ՆՈՐՍՅՐ

Կույր են նրանք, որ չեն տեսնում,
Վերելքը մեր այսքան խոշոր.
Մեր տեմպեր բայլշեւիկեան,
Որ աճում են ամեն մի օր...

Հազար սրտեր երգն է յուզել,
Այս օրերում մեր պայքարի.
Հազար ձեռքեր երկաթակուռ
Շենքն են շարում կոմմունայի..

Այս օրերի երգը հիմա,
Բայլշեւիկեան նոր թափ ունի,
Պայքարների բովից անցած
Բայլշեւիկեան նոր տեմպ ունի։

ՀԱՅ. ՍՍՌ. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՏԱՍՆԻԿՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՏԿԱՆ ԲԱԺԻՆ
Спец Отдел
Гос. Публичная Б-ка С. Р. Р.

ՇԻՐԿԱՆԱԼԸ

Գրեց՝ .Յ ՅԱԿՈԲԵԱՆ

Մատաղ լինեմ ես այն օրին, մատաղ լինեմ ես այն ժամին
Երբ ինձ նորից կվիճակի այցի գալու Շիրկանալին
Տեսա նրա երկունքը ես, պեղումները տարի առաջ,
Այժմ նրա բաղ ու բաղչեն, արան ու հանգը, ծառ ու կանաչ
Վիլլաների թաւուտ անտառ, ծառուղիներ, ծաղկոցներ,
Որոնց բոյրերից կզգա նորից չահելութիւն իմ հոգին ծեր
Եւ գիշերը հազարաչեա՝ տարածելով լուսի փեշեր,
Ինձ կերեւա հեռու տեղից մի աստղազարդ, հեքիաթ գիշեր
Եւ կսուլեն ֆապրիկների դուդուկները ուրախ կանչով,
Ողջունելով գիւղ ու քաղաք ալբոցերը հուր ճառանչով։
Բայլշեւիկ է Շիրկանալը, մեծ զաւակը Հայաստանի,
Նրա որդին չահը ձեռքին, լուսի աղբիւր մի տիտանի։

ՁԵՐ ԹԱՓԸ

Աշխատանքով հարւածային
Ու ձեր կամքով անվեհեր-
Տալիս էք դուք անիւներին
Բայլշեւիկեան նոր տեմպեր, նոր ամեպեր։



ԱՂԱՍԻ ԽԱՆԶԵԱՆ

Ամ. Հայաստանի Կոմ-կուսի Կեդրոնական գործադիր կոմիտէի Պատասխանատու Քարտուղար։

Եւ գրոհի այս օրերում,
Որպէս մի-մի հերոսներ,
Ձեր յաղթական երթն է անցնում,
Զգում դէպի դաղգեահներ, դաղգեահներ։
Ձեր նոր թափի հատու երգով,
Պատւում են անիւներ,
Գործում անվերջ, առուլգ թափով
Առաւոտից մինչ գիշեր, մինչ գիշեր։

ՇԷԿ ՏՂԱ

Շէկ տղի պոյին մեռնեմ
Մի տարի ա չեմ տեսել
տեսնողի աչքին մեռնեմ
Ջա՛ն պոյիդ մեռնեմ եա՛ր...
Այ հէ՛յ Վահեվաս
Սիրաս, ճնճղկան թեւ ա
Սիրաս, բաց անեմ տես՛սեւ՝ ա
Սիրաս ջա՛ն սոյիդ մեռնի՛մ, եար...

ԷՍ ՕՐԸ ՆՈՐԸ ՆՈՐԵԼ Է

Էս օր նորը նորել է
Նորել է բոլորել է
Եար քո լուսնակ երեսից
Իմ սիրտը մոլորել է. մոլորել է։
Քան լուսինն ամպի տակով,
Դու ջուր կերթաս տրակով
Հոգիս քեզ մատաղ լինի
Սիրտս կերես կրակով, սիրտս
կերես կրակով։

ՄԱՅԻՍ ՄԷԿ

Գովքը երգեցէ՛ք Մէկը Մայիսի
Վերջն է կապանքի ու աշխատանքի
Գովքը երգեցէ՛ք Մէկը Մայիսի
Տօնը գարունքի և ազատ կեանքի։

(2684) 636-2001
Спец. Отдел
Гос. Публичная Б-ка СССР

Գործարաններից, ծխոտ վայրերից
Եկէ՛ք ամենքդ տօնախումբուԹեան
Թափորվ՛ը երկրի Թափորիը տէր
Լիաղօր դու տէր աղնիւ մարտիկ
պրոլետարական։
Գովքը երգեցէք....

ՀԱՆՔԵՐՈՒՄ

Գրեց՝ Ս ՎԷԶԻՐԵԱՆ

Նաչում է շչակը, ընկեր
Վեր կաց նոր Թափով գործենք,
Այն հատու քլունքներով մեր՝
Լեռների արգանդը կրծենք։
Եկել են օրերը տեմպոտ,
Օրերը Թափի ու կամքի,
Մտել են հանքերը մրոտ,
Ու հնչում՝ զարկի՛ր-զարկի՛ր
Ու որքան Թափով զարկենք,
Քրտինքը հորդառատ հոսի.
Այնքան համարձակ կերգեն՝
Հնգամեա պլանի մասին։
Դէ,զարկենք էնդուզիաստ ընկեր
Սուզվենք հանքերը խորունկ,
Թող քրտնեն բրոնզէ դէմքեր,
Թող շարժվեն մկանները պիրկ։

ՔԱՂՀԱՆՈՂ ԳԵՂՋԿՈՒՀԻՒՆ ԵՐԳԸ

Քաղհանում իմ մոտ սարին
մատաղ լինիմ իմ եարին
Մեջքը արծաթ գամարա
Մեռնիմ ունքի կամարին...
Ուրաքս սարքած սրած
Մալիկս սաղրուց կորած
Տուլ-տու՛լ, տուլ-տու՛լ
Մաշիկս սաղրուց կարած տու՛լ տու՛լ
Ես իմ կարմիր երեսը երեսին դրած
Տու՛լ տուլ տուլ տուլ...

ԵՍ ՔԱՐՏԱՇ ԵՄ

Գրեց՝ Լ. ՀՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Ես քարտաշ եմ, քար եմ տաշում,
Խորհրդային մեր երկրում
Սոցիալիզմի քար եմ տաշում,
Խորհրդային մեր երկրում։
Տաշածս քարը լեռ քար ծ,
Չի փշրվի նա երբ՛ք,
Սոցիալիզմի հիմքն ենք դնում,
Չի քանդվելու նա երբէք։

ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻՒՆ

Հաւաքւենք կազմենք կուռ բանակ
Իլլիչի ալ դրոշի տակ,
Պատանի ենք մենք հսմարձակ,
Պատանի եռուն ու տաք։

Միլիոններ են մեր շարքերը,
Մեզ համար արգելք չկա.
Թէ որ պէտք են մեր կեանքերը
Կը զոհենք երբ տեղը գա։

Մեր ուժերը պինդ, ոնց երկաթ,
Զգուշացիր ֆաշիստ վոհմակ.
Հէ՛յ, գրոհիր, ելիր բարիկադ։
Կոմսօմոլ դու համարձակ
Միլիոններ են մեր . . .

Թող անշեղ սուլի գնդակը
Թող ճեղքի խաւարի խոր,
Կառուցում է մեր բանակը
Կոմմունիզմ վառ ու հզօր։
Միլիոններ են մեր . . .

Լենինեան դրոշը մենք պարզած
Թշնամուն կ՛տանք հաւաած.
Պատանի ենք մենք համարձակ։
Պատանի եռուն ու տաք։
Միլիոններ են մեր . . .

ԿՈՄԻՆՏԵՐՆ

Ելէ՛ք, գործարանները,
Մեզմենք մեր կուռ շարքերը,
Քալլենք դէպ ահեղ մարտ,
Դէպ մարտ, տ դուք միշտ անպարտ։
Սուրգէք հրացանները, առէք ճիշտ նշան,
Յառաջ, պրոլետարներ, դէպ մարտ անսասան։
Դէպ մարտ անսասան,
Դէպ մարտ անսասան

Մոնաւ մութ բանտերում
Տանջւող բիւր ընկերներ,
Մենք ձեզ ենք սպասում
Ու հաշւում մեր շարքերում։
Սպիտակ տերորին հարւածենք անյերկիւղ,
Ոտքի են կանգնել թէ քաղաք և թէ գիւղ,
Խարուսյկ ենս խարկել,
Վառել, բորբոքել։

Կոմինտերնի կանչին
Պողպատէ շարքերով,
Պաշտպան Սովետների
Ելնենք կարմիր դրոշով,
Պատրաստ ենք մարտի, մենք պատրաստենք կանչի
Երբէք ճակատը չենք մատնի նահանջի,
Պատրաստ ենք կանչի
Մենք չենք նահանջի։

Լենինիզմն է սփռում
Լույս մեր ճանապարհին,
Ու մահ է սպառնում
Կապիտալի աշխարհին։
Բանվոր դասակարգը կռվում է համառ
Համաշխարհային մեծ Սովետի համար։
Համաշխարհային
Սովետի համար։

Ելէ՛ք, գործարաններ,
Սեղմե՛ք Ձեր կուռ շարքեր,
Քալլենք դէպ ահեղ մարտ
Դէպ մարտ, դուք միշտ անպարտ։
Ստուգեք հրացաններ, առէք ճիշտ նշան։
Ցառաջ, պրոլետարներ, դէպ մարտ անսասան։
Դէպ մարտ անսասան
Դէպ մարտ անսասան։

ՄԵՐ ԿՈԼԽՈԶԻ ԱՐՏԵՐԸ

Գրեց՝ Յակոբեան

Մեր կոլխոզի արտերը
Տրակտորը վարել ա,
Կոլխոզն այսօր ծովի պէս
Կանաչել ա, ծաղել ա։
Մեր կոլխոզի արտերը
Նաշխուն բերքով հասել ա,
Ցորեն ծով հասկերը
Ճոխ բերքերով լցել ա։

Օրորվում են հասկերը
Ու բուցէլ են վարդերը,
Հազար էրնէկ նոր կեանքին՝
Շէնացել են դաշտերը։

ԶՈՐԱԳԵՍ

Գրեց՝ Յ. ՄՈՒՐԱԴԵԱՆ

Թունելները զբընգում են։
Դինամիտի պայթիւններից,
Լեռ ժայռերը խորտակւում են
Պողպատ մուրճի յարուածներից։
Զորագետն է յոխորտալէն
Գալիս, անցնում խոր ձորերով,
Ռպառաժներ քանդում անվերջ՝
Իր կատաղած ալիքներով։
Բայց չի անցնի էլ անօգուտ,
Վաղը կանցնի մեծ թունելով,
Իր կատաղած ալիքներով՝
Դինամօներ կը պատի։
Ու կաւարտւի հիդրոշէնը,
Տուրբինները կը որոտան,
Լոռւա խաւար մութ ձորերում
Նոր արեւները կը ժպտան։

ԿԱՐԴՈՑԷՔ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՄԱՄՈՒԼԸ։

Տեղեկանալու համար

Խորհ. Հայաստանի իրական կացութիւնը և շինարարական վիթխարի աշխատանքին որ հպարտութեամբ եւ ուրախութեամբ պիտի լեցնէ Ձեր սիրտը։

ԽՈՐՀ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՄՈՒԼԻ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ՝

ՀՕԿ-Ի ՀԱՐԱՒ-ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

LARREA 1333 BUENOS AIRES

Հ. Օ. Կ. Ը

Ընդամագրուիլ ՀՕԿ-ին կը նշանակէ

1- Նիւթապէս և բարոյապէս օգնել Խորհրդ. Հայաստանի տնտեսական և կուլտուրական-մշակոյթային հսկայական վերելքին։

2- Նպաստել երկրի և արտասահմանեան ժողովուրդական զանգուածներու եղբայրական կապի զօրացման։

3- Ոչակցիլ ներգաղթին։

4- Օրինական բոլոր միջոցներով պաշտպանել Խորհրդային Հայաստանը։

ԱՆԴԱՄԱԳՐՈՒԵՑԷ'Ք ՀՕԿ-ԻՆ



ՀՕԿ-Ի ՀԻՄՆԱԴԻՐ

ՍՍՀ ՄԵՏ. ՀԱՆՐԱՊԵՏ ԳՐԱԴԱՐԱՆ
Ս. ՍՅԱՍԼԻՍՅԱՆԻ ԱՆՎ.
ՀԱՏԱԿ ԲԱԺԻՆ
Спец. отдел
Гос. Публичная Б-ка С

24255
2013

Հ. Օ. Կ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ
ԿՕՄԻՏԷՆ- ՀՕԿ. Ը- ՕՐԻՆԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ Է·